ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 20

«02» 03 2020 թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արսեն Ռաֆիկի Արսենյանին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի պաշտոնից ազատելու և Դավիթ Միքայելի Վեքիլյանին նույն պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ համապատասխանաբար՝ 28.02.2020թ. N 54-Ա և 53-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Ա.Արսենյանի կողմից՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում, իսկ Դ.Վեքիլյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Հարությունյան Արմեն - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնախմբի անդամներ՝

Կոստանդյան Արսեն - Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ

Մարտիրոսյան Հայկ - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ

Աբաջյան Արուսյակ -	Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետ
Խալաթյան Նաիրա -	Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ
Բաղդասարյան Լևոն -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ
Կարագաշյան Լուիզա -	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության տարածքային բաժնի պետի պաշտոնակատար:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2020 թվականի մարտի 20-ը:

Ա.ԴԱՎԹՅԱՆ